Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

633.71
Ն-99
24 SEP 2010

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԾԽԱԽՈՏԻ ՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ, ՀԱՍՏԱՏՎԱԾ Ս. Խ. Հ. Մ.-Ի ՖԻՆԺՈՂԿՈՄԻ ԿՈՂՄԻՑ 1924 Թ. ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

§ 1.

Ծխախոտի մշակույթը յենթակա չի վորևիցե տուրքի, այլ հանդիսանում է վորպես ազատ զբաղմունք Ս. Խ. Հ. Մ.-ի ամբողջ սահմաններում. սակայն յենթարկվում է վորոշ հաշվառման կանոններին, վորոնք զետեղված են սույն հրահանգում:

§ 2.

Հաշվառման յենթակա յեն այն ծխախոտները, վորոնք բուսնում և աճում են Ս. Խ. Հ. Մ.-ի սահմաններում՝ ինչպես որինակ (Թրքական սերմից աճող) այսպես կոչված դեղին, մախորկային կամ գլանակային ծխախոտ), կամ թե Ամերիկյան բարձր տեսակի սերմից՝ (սիգարետի ծխախոտ) և բ) մախորկա հասարակ ծխախոտ (շվեցեա, բակուն) և այլ տեղական ցածր վորակի ծխախոտներ:

§ 3.

Չեն յենթարկվում վոչ մի հայտարարության (րեգլամենտացիա) § 2-ի ա կետում հի-

14 .06. 2013
19433
633.41
Հ-99

չատակված ծխախոտները, վորոնք մշակվում են 150 քառակուսի սաժեն տարածության վրա, իսկ բ) կետում հիշատակված ծխախոտը, վորոնք մշակվում են 60 քառակուսի սաժենի վրա:

§ 4.

Հաշվեառման յենթակա տնկարաններից, տերևային ծխախոտի բաց թողնելը պետք է կատարվի, փոխադրական վկայականների միջոցով, պահպանելով ծխախոտի փոխադրության վերաբերյալ կանոնները:

§ 5.

Գործերի ընդհանուր ղեկավարությունը, վորը վերաբերում է տնկարանների հաշվեառման, պատկանում է Ս. Խ. Հ. Ֆինժողկոմի հարկային վարչության (անուղղակի հարկերի): Այդ գործերի կատավարումը՝ յուրաքանչյուր նահանգում կամ շրջանում, կենտրոնացվում է նահանգային կամ շրջանային Ֆին բաժնի Անուղղակի Հարկերի յենթաբաժնում. ծխախոտի տնկարանի գրանցման հետ առնչություն ունեցող պարտականությունների կատարումը, ընկնում է շրջգործկոմների (գյուղխորհուրդների) վրա, իսկ ծխախոտի բերքի հաշվեառման վերաբերյալ՝ Անուղղակի հարկերի գործակալների վրա:

§ 6.

Անուղղակի Հարկերի գործակալների մուտ-

քը ազատ է՝ ինչպես ծխախոտի տնկարաններում, այնպես և ծխախոտի պահելու տեղերը: Յեվ նրանք իրավունք ունեն հարկ յեղած դեպքերում ստուգել տնկարանի տարածությունը, ծխախոտի բերքը և ծխախոտի ինչ տեսակի կամ վորակի լինելը ծխախոտագործների մոտ, այլ և իրավունք ունեն պահանջելու ծխախոտագործներից այն բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, վորոնք վերաբերում են տնկարաններին, ծխախոտի պահպանման և կամ ծախելուն: Գյուղխորհուրդը պետք է Անուղղակի Հարկերի գործակալներին՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում ցույց տան ամեն տեսակի աջակցություն:

§ 7.

Նահանգային, դավ և շրջանային հողային վարչությունների գործակալներ, այլ և (утасчковые) գյուղային (շրջանային) գյուղատնտեսները և մասնագետները, գյուղխորհրդի կամ շրջգործկոմի և Անուղղակի Հարկերի գործակալի հրավերով, մասնակցում են ծխախոտի տնկարանի գրանցման, ծխախոտի բերքի հաշվեառման ժամանակ, վորպես խորհրդականներ այն մասնագիտական հարցերում, վորոնք վերաբերում են ծխախոտի վորակի և տեսակի, նրա սպասվելիք բերքի և չորացման պրոցե-

1008
38497

սում (կամ ընթացքում) յեղած ծխախոտի քաշի (կշիռի) մասին։ Նահանգային, շրջանային և գավառային հողային վարչությունների, գործակալների, վերահիշյալ և նման հարցերի պարզաբանման համար տրվում է՝ բոլոր տունկարաններում, ազատ մուտքի իրավունք։

§ 8.

Ծխախոտի փորձնական տնկարանները, վորոնք պատկանում են պետական, հասարակական հիմնարկներին և կազմակերպություններին (Հողժողկոմի ծխախոտի և մախորկայի սինդիկատներին և գյուղատնտեսական միություններին), յենթարկվում են դրանցման և հաշվառման հատուկ կանոններին գրավոր հաղորդակցության միջոցով տունկի և բերքի մասին, վորը պետք է ունենա տնկարանի վարչությունը անմիջականորեն՝ տեղական նահանգային կամ շրջանային ֆին բաժնի հետ։ Այդ տեղեկությունները պետք է ուղարկվեն առանց ուշացումների և պետք է ընդգրկեն իրենց մեջ այն բոլոր հարցերը, վորոնք վերաբերում են ծխախոտի տունկի տարածության, բերքի, յելքի և նրա կանխիկ յեղած քանակի մասին, և վորոնք պահանջում են սույն հրահանգում հիշված բոլոր կանոններով։ Անուղղակի հարկերի գործակալների մուտքն ազատ է նույնպես այդ

փորձնական տնկարաններում ստացված տեղեկությունները ստուգելու, պարզելու նպատակով։

2. ԾԽԱԽՈՏԻ ՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 9.

Ծխախոտի տնկարանի դրանցումը կատարվում է ( ) գյուղխորհրդի կողմից, յերբ ծխախոտագործները դիմում են տալիս գյուղխորհրդին ծխախոտը տնկելուց հետո։

§ 10.

Ծխախոտագործների ծխախոտի տնկում կատարելու մասին հայտարարելու վերջին ժամկետը նշանակվում է տեղական նահանգային, շրջանային ֆինբաժինների կողմից՝ համաձայնելով շրջանային, հողային վարչությունների հետ, սակայն վոչ ուշ քան հուլիսի մեկը (նայած տեղական պայմաններին)։

§ 11.

Ի ապացույց ծխախոտի տնկարանի դրանցման յենթարկված լինելուն, Գյուղխորհուրդը ծխախոտագործին տալիս է տնկարանային թերթիկներ։

§ 12.

Տնկարանային թերթիկը բաղկացած է 3 մասերից՝ արմատից, թերթիկից և կրկնակից, վորի ձևը տրվում է։

§ 13.

Շրջանային ֆինբաժինները (Անուղղակի Հարկերի Ցեբաժինը) պատրաստում են տնկարանային թերթիկների բլանկներ, կազմելով տետրակներ բաղկացած՝ ամեն մեկը 100 թերթից և ուղարկում են շրջգործկոմներին (գյուղխորհրդին)։

Տնկարանային թերթիկները պետք է ժապավենված և կնքված լինեն, այնպես, որ կնիքը ընկած լինի թե տնկարանային թերթիկների կրկնակների և թե նրանց արմատների վրա։

§ 14.

Տնկարանի գրանցման մասին ծխախոտագործները հայտարարություն են տալիս Գյուղխորհուրդներին գրավոր կամ բերանացի։

Գրավոր հայտարարության մեջ պետք է մտնի տնկարանային թերթիկով պահանջված ձևերը՝ թե վորտեղ է գտնվում տնկարանը, ծխախոտագործի անուն, ազգանուն, հայրանուն և նրա բնակավայրը, ցանած ծխախոտի տեսակը, տնկարանի բռնած տարածությունը և ծխախոտի մնացորդը անցյալ տարվանից. իսկ բերանացի հայտարարության դեպքում, Գյուղխորհուրդը կամ նրա լիազորը, պետք է լեցնի թերթիկը, հայտարարությունն ավոդի խոսքերի հիման վրա։

§ 15.

Պահանջված տեղեկություններով լցվում են տնկարանային թերթիկի յերեք մասերն էլ, բայց վորում թվական տեղեկությունները պետք է գրվեն վոչ միայն թվերով այլ և տառերով։

§ 16.

Տնկարանային թերթիկը տրվում է ծխախոտագործին, կրկնակը անմիջապես ուղարկվում է Գավֆինբաժնին, իսկ արմատը մնում է գյուղխորհրդի մոտ։

§ 17.

Ծխախոտագործի հայտարարությունը՝ տնկարանային թերթիկը ստանալու համար, ազատ է թե գրոշմատուրքից և թե այլ տուրքերից։

3. ԳՐԱՆՑՎԱԾ ՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ԾԽԱԽՈՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՑԵՎ ՏՆԿԱՐԱՆԻՑ ԾԽԱԽՈՏ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

§ 18.

Ծխախոտագործը, վորի տնկարանը յերաշտից, կարկուտից, հեղեղումից և այլ տարերային պատճառներից վնասվում է, պետք է այդ մասին հայտնի Գյուղխորհրդին, ցույց տալով տնկարանի վնասված տարածությունը, վորպիսի դեպքում Գյուղխորհուրդը, նրա տնկարանային թերթիկի վրա այդ մասին պետք է անի համապատասխան նշանակումներ։

§ 19.

Եթե ծխախոտագործը, ցանկանում է վոչընչացնել իր ծխախոտը, վորը վորևիցե պատճառներից անպետքացել է, նախորոք պարտավոր է նրա մասին հայտնել գյուղխորհրդին, իսկ վոչնչացումը պետք է կատարվի գյուղխորհրդի լիազորի և յերկու վկաների ներկայությամբ և այդ վոչնչացման մասին գյուղխորհուրդը անկարանային թերթիկի մյուս յերեսում պետք է կատարի համապատասխան նշանակումներ:

§ 20.

Ծխախոտագործները կարող են միմիանց զիջել իրենց ծխախոտները, միայն նույն շրջանում՝ գյուղխորհուրդի գիտությամբ, վորն անելու յե համապատասխան նշանակումներ ինչպես զիջող նույնպես և ձեռք բերողի անկարանային թերթիկի մյուս յերեսում:

§ 21.

Միևնույն գյուղի շրջանում թույլ է տրվում ծխախոտի տեղափոխություն, առանց փոխադրական վկայականների՝ կամ փաստաթղթերի, հետևյալ դեպքերում.

ա) Յերբ ծխախոտագործը իր անկարանից ծխախոտը փոխադրում է իր պահեստը կամ մի այլ շենք, պահելու համար:

բ) Յերբ մի ծխախոտագործը իր ծխախոտը զիջում է մյուսին, վորը փոխադրում է այն:

§ 22.

Մնացած բոլոր դեպքերում, բացի 18-րդ հոդվածով նախատեսված դեպքերից, անկարանի ծխախոտի փոխադրումը կարող է կատարվել միմիայն փոխադրական վկայականներով՝ պահպանելով և կիրառելով այն պահանջներն ու կանոնները, վորոնք տրված են ծխախոտի բերքի մասին յեղած հրահանգում և ցույց են տրված հաջորդ 23 և 24 պարագրաֆներում:

§ 23.

Ծխախոտի տերը պետք է իր անկարանային թերթիկը ներկայացնի գյուղխորհրդին, վոր մյուս յերեսում անում է նշանակումներ տրված փոխադրական վկայականների №-ի և թվի արտահանված ծխախոտի քանակի մասին:

§ 24.

Ծխախոտ գնողը պետք է ներկայացնի (ծխախոտի բերքի մասին յեղած հրահանգով մատնանշված) իրեն՝ ծխախոտի պահեստ, գործարան և այլ ծխախոտի կայան ունենալու մասին վկայական: Այդ վկայականը ձեռք է բերվում կարոնային թերթիկների ձևերով (ձև

№ 2), վորոնք պատրաստվում և կազմում տեսակ բաղկացած 100 թերթից, վորոնք համարակալվում են և կնքվում ֆինբաժիններում (Անուղղակի Հարկերի Յե բաժնում)։ Այդ կտրոնային թերթիկներից մեկը կտրվում է գյուղխորհրդի կողմից և փոխադրական վկայական տալու ժամանակ կցվում և վկայականի տրմատին։

4. ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ, ԾԽԱԽՈՏԻ ՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

§ 25.

Ծխախոտի հավաքումը վերջանալու և չորացնելու ընթացքում, Անուղղակի Հարկերի գործակալները չրջում են տնկարանները։ Այդ չրջումների ժամանակը նշանակում են ֆինբաժինները համաձայնության գալով չրջանի հողային վարչությունների հետ, հարմարեցնելով տեղական պայմաններին։

§ 26.

Գյուղխորհրդից ստացված փոխադրական վկայականների կրկնակները հավաքվում են նահանգ. և չրջ. ֆինբաժիններում (Անուղղակի Հարկերի յենթաբաժնում) ըստ չրջանների և տրվում են համապատասխան անուղղակի հարկերի գործակալներին, վորը նշանակված է տնկարանները չրջելու։

§ 27.

Բոլոր չրջանները պետք է բաժանված լինեն ֆինբաժինների Անուղղակի Հարկերի գործակալների միջև, այնպես, վոր յուրաքանչյուր չրջանում գտնվող տնկարանները լինեն այցելված այդ գործակալների կողմից։

§ 28.

Պաչտոնական չրջումների ժամանակ, Անուղղակի հարկերի գործակալը անկախ ծխախոտի բերքը պարզելուց, պետք է քննություններ կատարի, թե ովյալ չրջանում, ծխախոտագործության վերաբերյալ կանոնների և պահանջների չեղում չի՞ կատարվում և ուղի՞ղ են կատարում գյուղխորհուրդները այն պարտականությունները, վորոնք տրված են նրանց վրա այդ առաջարկում։

§ 29.

Գործակալը ծխախոտի բերքի պարզարանմանն անցնելիս, նախորոք նրա մոտ ունեցած տնկարաններին թերթիկների կրկնակը ստուգում և թերթիկի հետ, վորը ներկայացնում և նրան ծխախոտագործը, հետո կատարում է տնկարանի հաշվեառումը հետևյալ կարգով։

Յուրաքանչյուր գրանցված տնկարանում, վորոշվում է ծխախոտի նոր բերքը իր բոլոր վերամշակության չրջաններում, այսինքն՝ ինչպես չչորացրված (փայտերի վրա, պարանների

վրա և այլն) նույնպես և չորացրած և հակերի մեջ փաթաթված. բացի ծխախոտի նոր բերքի ինչքան լինելը վորոշելուց, գործակալը վորոշում է նաև ծխախոտագործի մոտ գտնված անցյալ տարվա բերքի ծխախոտի մնացորդը: Կատարված հաշվեառման հետևանքի մասին գործակալը, անկարանային թերթիկի հակառակ յերեսում անում է նշանակումներ ծխախոտի կանխիկ քանակի վորոշման ընթացքում: Անուղղակի հարկերի գործակալները չատ ըզգույշ պետք է վարվեն, վորպեսզի ծխախոտը չփչրվի:

§ 30.

Գործակալների անկարանում կատարած ծխախոտի հաշվեառումին նրանց այլ գործողություններից անբավարար մնացող ծխախոտագործները կարող են բողոքել տեղական կամ շրջ. ֆինբաժինները:

§ 31.

Գործակալի անկարանում կատարած հաշվեառման ժամանակ, համապատասխան անկարանային թերթիկի կրկնակի հակառակ յերեսին անում են տվյալ անկարանում յեղած յելքի և բերքի հաշիվը, սկսած նրա գրանցման որից, մինչև նրան այցելելու ժամանակ, այդ հաշվի համար կարող է ոգտագործել շրջգործկոմի (գյուղխորհրդի) թերթիկի մյուս յերեսի վրա

կատարած նշանակումները և անկարանում կանխիկ դատած ծխախոտի մասին արած նշանակումները:

§ 32.

Յեթե կատարած հաշվեառումից պարզվում է, վոր ծխախոտագործների մոտ իրական ծխախոտի քանակը հակառակ հաշվի ավելանում կամ պակասում է, վորը չարաշահության յենթադրելու տրիթ է տալիս, այդ դեպքում գործակալը պետք է կատարի քննություն պարզաբանելու համար, արդյոք ծխախոտագործների կողմից ապօրինի ճանապարհով, չի՞ կատարվել ծխախոտի փոխադրություններ կամ ձեռք բերումը:

§ 33.

Հսկողության վերաբերյալ՝ այն է տվյալ շրջանի բնակչության կողմից արդյոք կատարվո՞ւմ են ծխախոտի վերաբերյալ տրված բոլոր պահանջները, գործակալները պետք է կատարեն հետևյալ ուսումնասիրությունները.

ա) Զկան արդյոք գրանցման յենթակա, բայց չգրանցված անկարաններ. այդպիսիները հայտնաբերելու դեպքում պետք է յենթարկվեն հաշվեառման, իսկ մեղավորները՝ դատական պատասխանատվության:

բ) Շրջգործկոմի (գյուղխորհուրդի) գիտությա՞մբ, այսինքն՝ անկարանային թերթիկի մյուս յերեսի վրա նշանակումներո՞վ է կատար-

վում անգործածելի դարձած ծխախոտի վոչընչացումը կամ ծխախոտագործների ծխախոտի իրար զիջումը:

գ) Ծխախոտագործների կողմից տրվո՞ւմ են հայտարարություններ տարերային պատճառներից իրենց տնկարաններին հասած վնասների մասին:

դ) Տնկարանից բաց չե՞ն թողնվում ծխախոտ առանց փոխադրական վկայականների:

ե) Ծխախոտի վերամշակումը չի՞ կատարվում հետամնաց, (տնավարի) ձևով, վորից առաջանում է ծխախոտի մանրացում և փոշիացում:

զ) Չի՞ կատարվում տերևային և ամեն տեսակի ծխախոտի առևտուր, վորը պատրաստված է ձեռքով, բաց կամ փաթաթված վիճակում:

§ 34.

Շրջգործկոմին (Գյուղխորհրդի) այցելության ժամանակ գործակալը պետք է հավաստիանա, թե արդյոք նրա-կողմից կատարվո՞ւմ են սույնը և ծխախոտի բերքի մասին յեղած հրահանգներով նրանց վրա դրված պարտականությունները:

Մասնավորապես գործակալը պետք է պարզի՝

ա) Շրջգործկոմի (Գյուղխորհրդի) կողմից կատարվո՞ւմ են ստուգումներ, տնկարանների գրանցման ժամանակ ծխախոտագործների տված տեղեկությունների, վորոնք վերաբերում են՝ տնկարանի բռնած տարածության անցյալ տարվանից մնացած ծխախոտի քանակի և նույնպես տնկարանին հասած վնասների մասին:

բ) Շրջգործկոմի (Գյուղխորհրդի) կողմից տրվո՞ւմ են պահանջված նշանակումներ ինչպես տնկարանային թերթիկների արմատների (թերթիկի հանձնումն ծխախոտագործին և կրկնակը շրջֆին բաժինները), (Անուղղակի Հարկերի յենթաբաժինը ուղարկելու մասին), նույնպես և նրանց կրկնակների (թերթիկը ծխախոտագործին հանձնելու մասին) և թերթիկի հակառակ յերեսի վրա (տնկարանի վնասների, անգործածելի դարձած ծխախոտի վոչընչացման, ծխախոտն ուրիշին զիջելու մասին):

գ) Շրջգործկոմի (գյուղխորհրդի) կողմից տնկարանից ծխախոտ տեղափոխելու համար ծխախոտագործներին փոխադրական վկայականների բաշխումը ո՞ւղիղ է կատարվում, մասնավորապես պարզել, թե պահեստում և թե գործարաններում ծխախոտ ստանալու համար տրված վկայականների կտրոնային թերթիկները կցվո՞ւմ են փոխ. վկայականների արմատներին և վերջապես փոխադրական վկայականների կրկնակները ճիշտ ժամանակի՞ն են

19433

ուղարկվում, Անուղղակի Հարկերի Ցենթարա-ժին:

§ 35.

Տնկարանի այցելությունը վերջացնելուց հետո, գործակալները տնկարանային թերթիկների կրկնակները վերադարձնում են նահ. շր. Ֆինբաժինները, նրանց վրա բաց տնկարանների կատարած ծխախոտի յելքի և մուտքի հաշվի հետ միասին: Այդ կրկնակների տվյալները նահ. և շրջ. Ֆինբաժինների կողմից գըրված են ծխախոտային տնկարանների հատուկ գրքում, վորպեսի գիրքը պետք է տարվի յուրաքանչյուր նահանգ. շրջ. և Ֆինբաժնում, վորոնց շրջանում գոյություն ունի գրանցման յենթարկված ծխախոտի տնկարաններ:

Յուրաքանչյուր տարվա համար կազմվում է այդ գիրքը այն տնկարանների վերաբերյալ, վորոնք գրանցման են յենթարկված տվյալ տարում:

Ս. Հ. Հ. Մ. Ֆինժողկոմի Պետական Հարկերի Վարչության Պետ՝ (Ր. ԼԵՎԻՆ)

Անուղակի Հարկերի Վարիչ՝ (Պ. ԼԵԲԵԴԵՎ)

Տպ. Տրեստի 1-ին Տպարան

[illegible] Տիրաժ 150 Պատվ. № 2721

1926

ՀՀ Ազգային գրադարան
NL0289646